

Կենսաբանություն

УДК 577.47

Գ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՍԱՐՁՈՒՄ ԽՈՇՈՐ ԵՎ ՍԱՆՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԹՈՐԱՆՔԻ ՀԵՏ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ
ԹԱՓԱՆՑՈՂ ԿԵՆՍԱԾԻՆ ՏԱՐԲԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ԵՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն: Սյունիքի մարզը զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավարևելյան հատվածը: Այն ներառում է Կապանի, Գորիսի, Սիսիանի և Մեղրու նախկին վարչական շրջանների տարածքները:

Սյունիքում դարեր ի վեր բնակչության հիմնական զբաղմունքը եղել է հողագործությունը և անասնապահությունը, որոնք այժմ էլ տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ճյուղերից են՝ կազմելով 9,5% [1]:

Սյունիքի մարզում գյուղատնտեսությամբ զբաղվում են ըստ բարձրության բոլոր գոտիներում՝ սկսած չոր մերձարևադարձայինից մինչև մերձալպյան և ալպյան մարգագետինների գոտին: Խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունն առավել զարգացած է Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններում, որտեղ խոտհարքները, արոտավայրերը, կերային մշակաբույսերը կայուն բազա են ստեղծում նշված ճյուղերի զարգացման համար, իսկ խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը առավել զարգացած են Կապանի տարածաշրջանում [2]:

Կան զանազան հետազոտություններ, որտեղ առաջարկվում են տարբեր միջոցառումներ արոտավայրերի բերրիության բարձրացման, հողերի էրոզիայից, տեղային ծանրաբեռնվածությունից և շրջակա միջավայրի վրա անասնապահության բացասական ազդեցությունից խուսափելու համար [3, 4]:

Սյունիքի մարզում էկոհամակարգերի աղտոտման պատճառ հանդիսանում են նաև գյուղատնտեսական հոսքաջրերը, որոնք առանց մաքրման լցվում են գետերը:

Նյութեր և մեթոդներ: Ուսումնասիրության համար ընդգրկել ենք Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Մեղրու և Սիսիանի տարածաշրջանները: Ուսումնասիրվել են գյուղատնտեսական գործունեության առանձնահատկությունները Սյունիքի մարզում և տրվել են վերջինիս հետևանքով շրջակա միջավայր ներմուծված կենսածին տարրերի՝ մասնավորապես ազոտի և ֆոսֆորի քանակական բնութագրերը: Գյուղատնտեսական գործունեության հետևանքով միջավայր ներմուծվող այդ տարրերի քանակական բնութագիրը բացահայտելու համար օգտվել ենք Վոլենվայդերի մեթոդիկայից, ըստ որի՝ խոշոր եղջերավոր անասունների 1000 կգ կենդանի քաշից տարեկան արտաթորանքի միջոցով շրջակա միջավայր է թափանցում 156 կգ ազոտ և 17 կգ ֆոսֆոր, իսկ մանր եղջերավոր անասունների դեպքում՝ համապատասխանա-

բար 119 և 20 կգ [5]: Ընդունելով Սյունիքի մարզում խոշոր եղջերավոր անասունների միջին քաշը 450 կգ, իսկ մանր եղջերավոր անասուններինը՝ 50 կգ, կարող ենք հաշվել մեկ մանր եղջերավոր անասունի արտաթորանքից միջավայր մտնող ազոտի և ֆոսֆորի քանակները:

Ըստ Վոլենվալդերի՝ միջին ծանրաբեռնվածությամբ 1 հա արոտավայրում տարեկան հող է ներմուծվում 10 գ/մ² ազոտ և 1,45 գ/մ² ֆոսֆոր: Այս տվյալների հիման վրա ստացվում է, որ 1 հա-ում կարելի է արածացնել 1,4 խոշոր և 13 մանր եղջերավոր պայմանական գլուխ անասուն [5]:

Արդյունքներ և քննարկում: Սյունիքի մարզի վիճակագրության գործակալության տվյալներից և անասնապահության ոլորտում կատարված հաշվարկներից պարզվել է, որ Սյունիքի մարզում 2006-2009 թթ. անասնազիտաքանակը աճել է (Խ.Ե.Ա. 51131–53513; մ.Ե.Ա. 58126–68236), իսկ 2010 թ.-ի առաջին կիսամյակում նվազել է՝ կազմելով 50659 գլուխ խոշոր և 64964 գլուխ մանր եղջերավոր անասուն:

Խոշոր և մանր եղջերավոր անասունների արտաթորանքի միջոցով շրջակա միջավայր ներմուծվող ազոտի (N) և ֆոսֆորի (P) քանակները բերված են աղյ. 1-ում:

Աղյուսակ 1

Տարածաշրջան	Տարեթիվ	Խոշոր եղջերավոր անասուն		Մանր եղջերավոր անասուն		Ընդամենը	
		N, կգ	P, կգ	N, կգ	P, կգ	N, կգ	P, կգ
Կասպան	2006	608844,6	66348,45	42096,25	7075	650940,85	73423,45
	2007	651596,4	71007,3	50402,45	8471	701998,85	79478,3
	2008	668163,6	72812	54186,65	9107	722350,25	81919
	2009	701017,2	76392,9	57423,45	9651	758440,65	86043,9
	2010	656229,6	71512,2	36628,2	6156	692857,8	77668,2
Գորիս	2006	1601893,8	174565,35	141556,45	23791	1743450,2	198356,35
	2007	1665846	181534,5	147464,8	24784	1813310,8	206318,5
	2008	1678833	182949,75	183860,95	30901	1862693,9	231850,75
	2009	1697225,4	184954,05	189709,8	31884	1886935,2	216838,05
	2010	1675252,8	182559,6	139747,65	33593	1815000,4	216152,6
Միսիան	2006	1282132,8	139719,6	153254,15	25757	1435386,9	165476,6
	2007	1334080,8	145380,6	152528,25	25635	1486609	171015,6
	2008	1312740	143055	155568,7	26146	1468308,7	169201
	2009	1274270,4	138862,8	150243,45	25251	1424513,8	164113,8
	2010	1128114	122935,5	139747,65	23487	1267861,6	146422,5
Մեղրի	2006	96525	10518,75	8942,85	1503	105467,85	12021,75
	2007	91470,6	9967,95	8568	1440	100038,6	11407,95
	2008	90838,8	9899,1	6711,6	1128	97550,4	11027,1
	2009	84099,6	9164,7	8627,5	1450	92727,1	10614,7
	2010	96665,4	10534,05	10281,6	1728	106947	12262,05

Օգտագործելով Սյունիքի մարզի եղջերավոր անասունների գլխաքանակի և արոտավայրերի ընդհանուր տարածքի (175204,6 հա) տվյալները՝ ըստ Վոլենվալդերի բանաձևերի հաշվարկել ենք նաև արոտավայրերի ծանրաբեռնվածությունը և անասնազիտաքանակի աճի հնարավորությունը մեկ պայմանական գլուխ խոշոր եղջերավոր անասունի հաշվով (աղյ. 2):

Ըստ Վոլենվալդերի՝ 9,3 պայմանական գլուխ մանր եղջերավոր անասունին անհրաժեշտ է մեկ պայմանական գլուխ խոշոր եղջերավոր անասունի համար պահանջվող արոտավայր [5]:

Սյունիքի մարզի արոտավայրերի բեռնվածությունը 2006–2010 թթ.

Տարեթիվ	2006	2007	2008	2009	2010
Արոտավայրերի բեռնվածությունը, %	23,4	24,4	24,7	24,8	23,5
Անասնազխաքանակի աճի հնարավորությունը մեկ պայմանական գլուխ խոշոր եղջերավոր անասունի հաշվով	187905	185480	184624	184436	187642

Հաշվարկներից երևում է, որ Սյունիքի մարզում արոտավայրերի բեռնվածությունը շատ ցածր է: 2006–2009թթ. տարածաշրջանում նկատվել է անասնազխաքանակի աճ, որը սակայն ծանրաբեռնվածություն չի առաջացրել: Այս տարածաշրջանը ունի անասնապահության զարգացման մեծ պոտենցիալ:

Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոն

Ստացվել է 04.10.2010

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Հայաստանի հանրապետության մարզերը թվերով, վիճակագրական ժողովածու 2001–2005թթ., Եր., 2006, 286 էջ:
2. **Մանասյան Մ.Գ. և ուրիշներ.** Սյունիքի մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը). Եր., ԵՊՀ հրատ., 2002, 155 էջ:
3. **Դանիելյան Ա.Ա., Գրիգորյան Կ.Վ., Գրիգորյան Կ.Կ., Ղազարյան Կ.Ա. և Ղազարյան Ն.Փ.** ԵՊՀ Գիտական տեղեկագիր, 2006, № 1, էջ 154–157:
4. **Ղազարյան Ն.Փ., Դանիելյան Ա.Ա., Գրիգորյան Կ.Վ. և Ղազարյան Կ.Ա.** Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր, 2005, № 2–3, էջ 452–456:
5. **Vollenweider R.A.** Scientific fundamental of the eutrophication of lakes and flowing waters with particular reference to nitrogen and phosphorus effect in eutrophication. Teck. rep. organiz, econom, co-oper. and devel. Paris, 1968, p. 159.

Г. А. ГЕВОРКЯН

КОЛИЧЕСТВЕННАЯ ХАРАКТЕРИСТИКА БИОГЕННЫХ ЭЛЕМЕНТОВ, ВНОСИМЫХ В ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ В РЕЗУЛЬТАТЕ ЖИЗНЕДЕЯТЕЛЬНОСТИ РОГАТОГО СКОТА, И НАГРУЗКА ПАСТБИЩ В МАРЗЕ СЮНИК

Резюме

Изучаются характеристики жизнедеятельности рогатого скота в пределах Сюникского марза, в частности приводятся количества вносимых в почву азота и фосфора. Также обосновывается возможность развития на этой территории животноводства.

G. A. GEVORKYAN

QUANTITATIVE CHARACTERISTICS OF BIOGENIC ELEMENTS ENTERED INTO THE ENVIRONMENT AS A RESULT OF ACTIVITY HORNED LIVESTOCKS AND LOAD OF PASTURES IN SYUNIK MARZ

Summary

The characteristics of activity of horned livestock in Syunik marz, value of horned livestock impact on the environment particularly quantities of nitrogen and phosphorus and the possibility of cattle breeding development in this territory have been discussed.